“ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – 300”
ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 24-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ “Վենետիկի Մխիթարյան միաբանություն – 300” խորագրով միջազգային գիտաժողովի բացումը: Այն կազմակերպել էին ՀՀ մշակույթի նախարարությունը, ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը (Մատենադարան), Վենետիկի Մխիթարյան միաբանությունը՝ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ԳԱԱ պատմության ինստիտուտին (ՊԻ) հատկացված ֆինանսական աջակցությամբ:

Գիտաժողովը բացեց ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: *“Մխիթարյան միաբանությունը գիտական, մշակութային այն կառույցն է, որ ոչ միայն սերունդներին է փոխանցել հայ ժողովրդի պատմությունն ու արժեքները, այլև հարստացրել ու զարգացրել է դրանք,– ասաց նա:– Գիտաժողովը հիանալի առիթ է Մխիթարյանների ժառանգությունն ու ներկա գործունեությունը ներկայացնելու, հանրայնացնելու, ուսումնասիրելու համար”:*

ՀՀ մշակույթի նախարար Հրանուշ Հակոբյանը, *ողջունելով ներկաներին, նշեց, որ 300 տարի առաջ հայերը կարողացան անմարդաբնակ Սուրբ Ղազար փոքրիկ կղզին դարձնել հոգևոր, կրթամշակութային հզոր կենտրոն: Նա կարևորեց այն իրողությունը, որ օտարազգի շատ անվանի մտավորականներ հաստատվել են Մխիթարյան միաբանությունում, գրել մեծարժեք աշխատություններ, արտահայտել իրենց հիացմունքը հայ մշակույթի հանդեպ:*

Վենետիկի Մխիթարյան միաբանության քահանայապետական պատվիրակ, Թուրքիայի Հայ Կաթողիկե եկեղեցու թեմի առաջնորդ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Լևոն արք. Զեքիյանն *իր ողջույնի խոսքում ընդգծեց՝ գիտաժողովը ոչ միայն հարգանքի, այլև խոր բարեկամության նշան է, որ տարիներ ի վեր գոյություն ունի Մխիթարյան միաբանության և հայաստանյան գիտական կառույցների միջև:*

Ողջույնի խոսքով հանդես եկավ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: *Արժևորելով Մխիթարյանների գործունեությունը՝ նա նշեց, որ միաբանները, զարգացնելով հայագիտության բոլոր ուղղությունները, նախնառաջ ունեցել են հայապահպանության սրբազան առաքելություն:*

Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը *նշեց, որ Մխիթարյան միաբանությունը յուրաքանչյուր քաղաքակիրթ ազգի, երկրի համար չափանիշ կարող է լինել, և համոզմունք հայտնեց, որ գիտաժողովը նոր էջ կբացի Մխիթարյան ժառանգության ուսումնասիրման գործում:*

Լիազումար նիստում զեկուցումներով հանդես եկան Լևոն արք. Զեքիյանը *("Մխիթար՝ խորհուրդ եւ մարտահրաւէր. Հայ հոգեւորութեան եւ մշակոյթի ռահվիրայ մը, համաքրիստոնէական, համամարդկային տարածքով"), ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս* Աշոտ Մելքոնյանը *("Ղուկաս Ինճիճյանի ավանդը Հայաստանի պատմաաշխարհագրական հարցերի ուսումնասիրության բնագավառում"), Սփյուռքի նախարարի տեղակալ* Սերժ Սրապիոնյանը *("Մխիթարյանները Միքայել Նալբանդյանի գնահատմամբ"), ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի (ԳԻ) տնօրեն, բ. գ. դ.* Վարդան Դևրիկյանը *("Հայ միջնադարյան գրականության պատմության պարբերացման Մխիթարյանների սկզբունքները"):*

Այնուհետև գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց բաժանմունքներում:

"Մխիթարյանների գործունեությունը պատմագիտության ասպարեզում" բաժանմունք Ա-ում (նախագահողներ՝ պ. գ. դ. Էդիկ Մինասյան, *պ. գ. դ.* Գևորգ Ստեփանյան*)* Հայր Սերովբե վրդ. Չամուրյանը *("Բազմավեպ" հայագիտական հանդեսի խմբագիր) հանդես եկավ "Մխիթար Աբբահոր մուտքը Սուրբ Ղազար կղզի",* Ազատ Բոզոյանը *[ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ (ԱԻ)]՝ "Բյուզանդական նոմոկանոնի վենետիկյան ձեռագիրը",* Ֆելիքս Մովսիսյանը *[Վանաձորի Հովհ. Թումանյանի անվ. պետական համալսարան (ՎՊՀ)]՝ "Վենետիկի Մխիթարյանները նապոլեոնյան տիրապետության դեմ եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի մասին",* Նորայր Պողոսյանը *(ԵՊՀ)՝ "Մխիթարյան միաբանների նամակները 18-րդ դարում Երուսաղեմի կացության մասին",* Լուսինե Ս. Սահակյանը *(ԵՊՀ)՝ "Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում պահվող Համշենում օրինակված երկու ձեռագրի մասին (հմր. 114, հմր. 52)",* Հովհաննես Այվազյանը *(ԳԱԱ Հայկական հանրագիտարան)՝ "Մխիթարյան միաբանության բնագիտական ժառանգության շուրջ",* Ռիմա Միրումյանը *(ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ)՝ "Մխիթարյանների քաղաքակրթական մեծ սխրանքը" զեկուցումներով:*

"Մխիթարյանների ավանդը բանասիրության ոլորտում" բաժանմունք Բ-ում (նախագահողներ՝ ԳԱԱ թղթակից անդամ Ալիտա Դոլուխանյան, *բ. գ. թ.* Հերիքնազ Որսկանյան*)* Ալիտա Դոլուխանյանը *(Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան) հանդես եկավ "Վիկտոր Լանգլուան Վենետիկի Մխիթարյան միաբանության մասին",* Հերիքնազ Որսկանյանը *(ԳԻ)՝ "Հայ միջնադարյան տեսիլների Մխիթարյանների հրատարակությունները և ուսումնասիրությունները",* Ալբերտ Մուշեղյանը *(ԳԻ)՝ "Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան Հայրեր*

Հովսեփ Գաթըրճյանը և Բարսեղ Սարգիսյանը՝ Նիկիական Հանգանակի ակնառու մեկնաբաններ (եվրոպացի մասնագետների գնահատմամբ)”, Ռուզաննա Տեր-Գրիգորյանը *(ԵՊՀ)՝ “Ռուս դասական գրականությունը Մխիթարյանների գնահատմամբ”,* Անահիտ Բեքարյանը *[ԳԱԱ արվեստի ինստիտուտ (ԱրՎԻ)]՝ “Բայրոնի հայագիտական ուսումնասիրությունները Մխիթարյան Մայրավանքում”,* Վազգեն Համբարձումյանը *[ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ (ԼԻ)]՝ “Մխիթարյան միաբանության լեզվամշակութային դերը հայերենի ուղղագրության դասական կանոնարգման գործում”,* Լիլիթ Պետրոսյանը *(ՎՊՀ)՝ “Հին հայերենի հնչյունների մասին դիտարկումները Դ. Թրականցու “Քերականական արուեստ”-ի մեկնիչների երկերում”,* Լավրենտի Միրզոյանը *(ՄԳԱԱ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան)՝ “Մխիթարյանների մանկավարժական ժառանգությունը” զեկուցումներով:*

“Արվեստը և մշակույթը Մխիթարյանների գործունեության մեջ” բաժանմունք Գ-ում (նախագահողներ՝ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյան, *արվ. դ.* Աննա Ասատրյան*)* Արուսյակ Թամրազյանը *(Մատենադարան) հանդես եկավ “Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության “մանրուսման” ձեռագրերը”,* Հայկ Իրթիճեանը *(Չեխիայի Չարլզ համալսարան)՝ “Վենետկոյ Մխիթարեան Ս. Հարց երաժշտական վաստակը”,* Աննա Ասատրյանը *(ԱրՎԻ)՝ “Հայ երաժշտությունը “Գեղունու” էջերում”,* Լուսինե Զ. Սահակյանը *(Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա)՝ “Կոմիտաս Վարդապետը և Մխիթարյան միաբանությունը”,* Անահիտ Բաղդասարյանը *(ԱրՎԻ)՝ “Սուրբ Պատարագի երգեցողությունները Պիետրո Բիանկինիի բազմաձայն մշակմամբ”,* Աշոտ Գրիգորյանը *[Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ (ՃԱԹԻ)]՝ “Հայկական պաշտամունքային կառույցների հորինվածքային նախատիպերի և տիպերի ծագման ու զարգացման նախապայմանների մեկնությունները, ըստ Վենետիկի Մխիթարյան միաբանների ուսումնասիրությունների”,* Դավիթ Քերթմենջյանը *(ԱրՎԻ)՝ “Հայկական քաղաքաշինության պատմության նյութերը Մխիթարյանների գիտական ժառանգությունում” զեկուցումներով:*

Միջազգային գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց հոկտեմբերի 25-ին:

“Մխիթարյանների գործունեությունը պատմագիտության ասպարեզում” բաժանմունք Դ-ում (նախագահողներ՝ պ. գ. դ. Կարեն Խաչատրյան, *պ. գ. թ.* Արմեն Մարուքյան*) “Մխիթարյան միաբանության հայատառ թուրքերեն հրատարակությունները” զեկուցմամբ հանդես եկավ* Հասմիկ Ստեփանյանը *(ԱԻ), “Վենետիկի Մխիթարյանների գաղափարական հայրենիք ստեղծելու մոդելի տեղայնացումն Ալեքսանդրապոլում” զեկուցմամբ՝* Գևորգ Այվազյանը *(ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն), “Հայր Միքայել Չամչյանը և իր գործունեությունը Բասրայի մեջ 1769–1774 թթ. (համառոտ ակնարկ)” զեկուցմամբ՝* Սեդա Օհանյանը *(ՊԻ), “Ներ-*

սես Ակինյանի գործունեությունը Խորհրդային Հայաստանում նորահայտ փաստաթղթերի լույսի ներքո” զեկուցմամբ՝ Համո Սուքիասյանը *(ՊԻ), “Ս. Ղազարի ձեռագրագետ հայրերը և նրանց կազմած ձեռագրացուցակները” զեկուցմամբ՝* Քնար Հարությունյանը *(Մատենադարան), “Մխիթարյանների ավանդը հայ քննական պատմագրության ձևավորման մեջ” զեկուցմամբ՝* Արման Մալոյանը *[ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ (ԿԱԻ)], “Մխիթարեան միաբանութեան դպրոցաշինութեան պատմութիւնն ի սփիւռս աշխարհի” զեկուցմամբ՝* Ավետիս Ափոշյանը *(ԵՊՀ):*

“Մխիթարյանների ավանդը բանասիրության ոլորտում” բաժանմունք Ե-ում (նախագահողներ՝ բ. գ. դ. Արծրուն Ավագյան, *բ. գ. դ.* Սուսաննա Հովհաննիսյան*) “Մխիթարյանները Լեոյի գրապատմական ուսումնասիրությունների համատեքստում” զեկուցմամբ հանդես եկավ* Սուսաննա Հովհաննիսյանը *(ԳԻ), “Հայկական դասականապաշտության (կլասիցիզմի) տեսական և գեղարվեստական առանձնահատկությունները Մխիթարյանների տեսական, գեղարվեստական գրականության մեջ” զեկուցմամբ՝* Դավիթ Գասպարյանը *(ԿԱԻ), “Դասագրքերի Մխիթարյանների 18-րդ դարի հրատարակությունները” զեկուցմամբ՝* Քրիստինե Մելքումյանը *(ԳԻ), “Արսեն Բագրատունու “Հայկ դյուցազն” պոեմը” զեկուցմամբ՝* Սիրանուշ Մարգարյանը *(ԳԻ), “Վենետիկի Մխիթարյան միաբանությունը Վիգեն Իսահակյանի հուշերում” զեկուցմամբ՝* Ավետիք Իսահակյանը *(ԳԻ), “Հովհ. Թումանյանը Մխիթարյանների գնահատմամբ” զեկուցմամբ՝* Եվա Մնացականյանը *(ԳԻ), “Հայկական վերածնության հարցը Մխիթարյանների՝ հայ գրականության պարբերաբաժանման համակարգում” զեկուցմամբ՝* Լուսինե Վարդանյանը *(ԳԻ), “Գաբրիել Այվազյանը Մխիթարյան միաբանության անդամ” զեկուցմամբ՝* Հասմիկ Իրիցյանը *(Մատենադարան), “Մխիթարյանները և հայոց լեզվափիլիսոփայության տարրեր” զեկուցմամբ՝* Լուսինե Ավետիսյանը *(ԳԻ):*

“Արվեստը և մշակույթը Մխիթարյանների գործունեության մեջ” բաժանմունք Զ-ում (նախագահողներ՝ արվ. դ. Հենրիկ Հովհաննիսյան, *արվ. թ.* Լիլիթ Արտեմյան*) “Մխիթարյան թատերագրությունը սրբախոսությունից կլասիցիզմ” զեկուցմամբ հանդես եկավ* Հենրիկ Հովհաննիսյանը *(ԱրվԻ), “Քրիստափոր Կարա-Մուրզան և Վենետիկի Մխիթարյան միաբանությունը” զեկուցմամբ՝* Լիլիթ Արտեմյանը *(ԱրվԻ), “Վենետիկի Մխիթարյանները և միջազգային գեղարվեստը” զեկուցմամբ՝* Արծվի Բախչինյանը *(ՊԻ), “Եվրոպական երաժշտատեսական մտքի դրսևորումները Խաչատուր Էրզրումեցու և Մխիթար Սեբաստացու աշխատություններում” զեկուցմամբ՝* Անի Մուշեղյանը *(ԳԻ), “Ձեռագիր գրքերը, որպես ազգային խոհանոցի ուսումնասիրության աղբյուր (դիտարկումները՝ ըստ Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանի ձեռագրերի)” զեկուցմամբ՝* Խորեն Գրիգորյանը *(ՀՀ մշակույթի նախարարություն), “Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Ղ. Տայանի “Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ” բազմահատոր շարակնոցի անտիպ Ա. հա-*

տորը” զեկուցմամբ՝ Արփի Վարդումյանը *(Մատենադարան), “Հայր Ղևոնդ Ալիշանը հայկազուն սրբերի հետքերով” զեկուցմամբ՝* Մարիաննա Տիգրանյանը *(ԱրվԻ), “Տայքի և Գուգարքի ճարտարապետությունը՝ Մխիթարյան միաբանների աշխատություններում” զեկուցմամբ՝* Դավիթ Նահատակյանը *(ՃԱԹԻ):*

Միջազգային գիտաժողովի ավարտին գումարվեց լիագումար նիստ, որը վարեց Գևորգ Ստեփանյանը*: Լսվեցին բաժանմունքների ղեկավարների հաղորդումները քննարկումների արդյունքների մասին: “Մխիթարյանների գործունեությունը պատմագիտության ասպարեզում” նիստերի արդյունքներն ամփոփեցին* Գևորգ Ստեփանյանը *և* Արմեն Մարուքյանը*, “Արվեստը և մշակույթը Մխիթարյանների գործունեության մեջ” նիստերը՝* Արարատ Աղասյանը*, “Մխիթարյանների ավանդը բանասիրության ոլորտում” նիստերը՝* Հերիքնազ Որսկանյանը*:*

Այնուհետև ելույթ ունեցավ Վենետիկի Մխիթարյան միաբանության քահանայապետական պատվիրակ, Թուրքիայի Հայ կաթողիկե եկեղեցու թեմի առաջնորդ Լևոն արք. Զեքիյանը*: Նա շնորհակալություն հայտնեց գիտաժողովի կազմակերպիչներին և գիտական զեկուցումների հեղինակներին՝ հավելելով, որ Մխիթար Սեբաստացին ու նրա հավատարիմ աշակերտները գիտնական, արվեստաբան լինելուց առաջ կրոնավորներ էին, և շատ ուրախալի է, որ գիտաժողովի ընթացքում չստվերվեց այդ իրողությունը:*

Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանն *ասաց, որ Մխիթարյան միաբանությունը եվրոպական քաղաքակրթության մեծագույն կենտրոններից մեկն է, և մենք հպարտ ենք, որ նրա հիմնադիր Մխիթար Սեբաստացին ու միաբանության հայրերը մեծ հայեր են: Նա ընդգծեց, որ Հայաստանում և Սփյուռքում գործող հայագիտական բոլոր կենտրոնները սովորելու շատ բան ունեն Մխիթարյան միաբանությունից:*

Սփյուռքի նախարարի տեղակալ Սերժ Սրապիոնյանը*, նախարար Հրանուշ Հակոբյանի անունից շնորհակալություն հայտնելով միջազգային գիտաժողովի կազմակերպիչներին արդյունավետ համագործակցության համար, նշեց, որ Մխիթարյանների անունով Երևանում փողոց անվանակոչելու առաջարկը և Հայաստանում մխիթարյանական ընթերցումներ, գիտաժողովներ պարբերաբար կազմակերպելու անհրաժեշտության գաղափարը տեղին են, ընդունելի: Նաև հավելեց, որ գիտաժողովի զեկուցումները կտպագրվեն “Բազմավեպ” հայագիտական հանդեսի բացառիկ համարում:*

ԹԱՄԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ,
ԼԻԱՆԱ ՕՀԱՆՅԱՆ